



«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Սովորողների հետ ինքնուրույն աշխատանքի կազմակերպման ձևերը

Առարկան՝ Մաթեմատիկա

Հետազոտող ուսուցիչ՝ Ծովիկ Իսկանդարյան

Ուսումնական հաստատություն՝ Նոր Խարբերդի Մն. Ղազարյանի անվան
N2 միջն. դպրոց

Երևան 2022

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ինքնուրույն աշխատանքն անձի, նրա ստեղծագործական հնարավորության ինքնակարգավորման կարևորագույն պայմանն է: Իսկ ինչո՞ւ է այնպես, որ շատ են ոչ ինքնուրույն մարդիկ, որոնք ունակ չեն առանց ուրիշներին նայելու ընդունել անհրաժեշտ որոշումներ: Այս հարցը նորից ու նորից հառնում է հասարակության առջև: Այն ուսումնասիրվել է տարբեր երկրների մանկավարժների և հոգեբանների կողմից:

Աշակերտի ինքնուրույն աշխատանքը գլխավոր ճանապարհն է ինքնուրույնության դաստիարակման: Դպրոցի երկարամյա փորձը դրա վառ ապացույցն է:

Ինքնուրույն աշխատանքը կարող է առաջացնել լուրջ բարդություններ: Այն պահանջում է էմոցիոնալ և մտավոր լարվածություն, առաջացնում է բավականին անսպասելի հարցեր և սխալներ, կասկածներ և անհանգստություններ: Նկատվել է, որ բավականին շատ դժվարություններ ի հայտ են գալիս երեխաների մոտ սկզբնական շրջանում, այս կամ այն կարողությունների և ունակությունների ստեղծման ժամանակ, այդ պատճառով պետք է այդ աշխատանքը կազմակերպել ցածր դասարաններում: Եթե դա բաց թողնենք, ապա բարձր դասարաններում ուշ կլինի: Մեր աշխատանքում մենք ցանկանում ենք լուսաբանել հարցեր՝ ինքնուրույն աշխատանքի ճիշտ կազմակերպման մասին, քանի որ գտնում ենք, որ ինքնուրույն աշխատանքը ճիշտ անձ ձևավորելու համար արդյունավետ հիմք է և երեխաների մոտ առաջացնում է մտավոր ինքնուրույնություն: Այն կարգավորում է միտքը և այն ընտելացնելով աշակերտի մոտ ծնում է հավատ իր ուժերի և հնարավորությունների նկատմամբ: Տարրական դասարաններում ամեն ինչ կախված է ուսուցչից, թե ինչպես երեխաներին կսովորեցնի ինքնուրույն աշխատանք կատարել:

Թեմայի արդիականությունը: Մաթեմատիկայի ուսուցման գործընթացում ուսուցչի խնդիրն է ոչ միայն ծրագրով նախատեսված հաստատուն գիտելիքներ

ապահովելը, այլ սովորողի մտածողության ինքնուրույնությունը և ակտիվությունը զարգացնելը: Այս ուղղությամբ կատարվող աշխատանքները պետք է սկսել ուսումնառության առաջին իսկ օրերին:

Ինքնուրույն աշխատանքը ճանաչողական ուսումնական գործունեություն է, երբ աշակերտի մտածողության հաջորդականությունը, նրա մտավոր և գործնական գործողությունները, գործունեությունը կախված են և որոշվում են հենց աշակերտով:

Ինքնուրույն աշխատանքների առկայությունը անհրաժեշտ է դասերի ժամանակ, այդ թվում նաև մաթեմատիկայի դասերին, քանի որ դրանք վարժեցնում են կամքը, դաստիարակում են աշխատունակություն, ուշադրություն, կարգապահություն: Մաթեմատիկայի դասերին անհրաժեշտ է ուսուցչի կենտրոնացումը աշակերտի ինքնուրույն դատողություն և եզրակացություն կատարելու ուղղությամբ: Աշխատելով ինքնուրույն՝ աշակերտն աստիճանաբար յուրացնում է ինքնուրույն աշխատանքի այնպիսի ընդհանուր հնարներ, ինչպիսիք են աշխատանքի նպատակի հստակ գիտակցումը, աշխատանքի կատարումը, ստուգումը, սխալների ուղղումը: Ինքնուրույն աշխատանքը մի մեթոդ է, որը շատ է օգնում ուսուցչին պարզելու սովորողի ընդունակությունները:

Ինքնուրույն աշխատանքը լայնորեն կիրառվում է դպրոցական պրակտիկայում: Ուսուցիչները ձգտում են սովորողին զինել համապատասխան կարողություններով՝ օգտագործելով դրա համար և՛ դպրոցական պարապմունքները, և՛ լրացուցիչ պարապմունքները, և՛ տնային հանձնարարությունները:

Հետազոտության օբյեկտը տարրական դասարաններում մաթեմատիկայի ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպումն է:

Հետազոտության առարկան ինքնուրույն աշխատանքի կազմակերպումն է:

Հետազոտության նպատակն է ապացուցել, որ ճիշտ կազմակերպելու դեպքում ինքնուրույն աշխատանքը ակտիվացնում է երեխաների մտավոր գործունեությունը:

Հետազոտության վարկածը: Եթե երեխաներին պատվաստենք ինքնուրույն աշխատելու ունակություն, և այն իր տարատեսակներով կիրառենք դասերի ժամանակ, ապա երեխաների մոտ կառաջանա ինքնուրույնություն և կգարգանա մտածողությունը, նրանք կձգտեն կատարել ավելի բարդ առաջադրանքներ:

Հետազոտության խնդիրները.

1. Ուսումնասիրել հետազոտության հիմնահարցի վերաբերյալ հոգեբանամանկավարժական, ուսումնամեթոդական գրականություն:
2. Որոշել ինքնուրույն աշխատանք կատարելու կարողության ձևավորման աստիճանը մաթեմատիկայի ուսուցման գործընթացում:
3. Մշակել վարժությունների համակարգ, որն ուղղված կլինի կրտսեր դպրոցականների ինքնուրույն աշխատանքներ կատարելու ունակությունների ձևավորմանը:

Հետազոտության մեթոդները

Թեմային համապատասխան գրականության ուսումնասիրում, զրույցներ, ուսուցիչների անկետավորում, դասերի և պարապմունքների դիտարկում և մոդելավորում, ստուգողական աշխատանքների անցկացում և արդյունքների վերլուծություն:

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից:

ԳԼՈՒԽ 1: ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՏԱՐԲԵՐԱԿԱՆ

ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ԴԱՍԵՐԻՆ

1.1. Ինքնուրույն աշխատանքները որպես ուսուցման մեթոդ և որպես կրտսեր դպրոցականների զարգացման և դաստիարակության միջոց

Ինքնուրույն աշխատանքն ակտիվ ուսուցման մեթոդ է: Որոշ ուսուցիչների համար ինքնուրույն աշխատանքն ուսուցման կազմակերպման մեթոդ է, ուրիշների համար՝ հատուկ առաջադրանքներ, որոնք նախատեսված են ինքնուրույն կատարման համար, երրորդների համար սովորողի գործունեությունն է, որը կատարվում է առանց ուսուցչի անմիջական մասնակցության: Բայց և այնպես մաթեմատիկայի դասերին ինքնուրույն աշխատանքի հիմնական հատկանիշներն են.

- ուսուցչի տված առաջադրանքի առկայությունը,
- սովորողի ինքնուրույնությունը,
- ուսուցչի ղեկավարությունը,
- առաջադրանքի կատարումը առանց ուսուցչի անմիջական մասնակցության,
- սովորողի ակտիվությունը և ձգտումը,
- հատուկ ժամանակն առաջադրանքը կատարելու համար:

Այսպիսով՝ մաթեմատիկայի դասաժամին ինքնուրույն աշխատանքը ուսուցման մի մեթոդ է, որի միջոցով սովորողը ուսուցչի տված առաջադրանքով և իր ղեկավարությամբ ինքնուրույն լուծում է դասարանային առաջադրանքը՝ ցուցաբերելով ջանք և ակտիվություն: Ինքնուրույն աշխատանքի տարբերակիչ հատկանիշերից է երեխաների ակտիվությունն առանց ուսուցչի օգնության: Այդպիսի տեսակետը համարվում է սխալ և ոչ արդյունավետ: Հենվելով դրան՝ ուսուցիչը բացառում է համագործակցելու կարևորությունը: Իրականում ուսուցիչը չի մասնակցում առաջադրանքի կատարմանը, բայց նա կազմակերպում է գործունեությունը: Ինքնուրույն աշխատանքը միշտ ավարտվում է ինչ-որ արդյունքով,

քանի որ աշակերտն ինքնուրույն է կատարում այն: Ինքնուրույն աշխատանքի արժեքը և նշանակությունը զգալի են ի համեմատ համատեղ գործունեության: Աշխատանքի ընթացքում ոչ միայն բացահայտվում է գիտելիքի մակարդակը, այլ նաև աշակերտի ինքնուրույնությունը, նրա գործունեությունը, անհատականությունը, ոչ ստանդարտ ստեղծագործական մոտեցումը:

Որպես ուսումնառության մեթոդ ինքնուրույն աշխատանքը հաճախ է կիրառվում և՛ դպրոցում, և՛ տանը՝ գիտելիքները ամրապնդելու և ունակություններ ձևավորելու նպատակով: Բայց և այնպես ուսուցչի փորձը և գիտափորձերը ապացուցել են դրա արդյունավետությունը նաև այլ նպատակների հասնելու համար: Նյութը, որը հասանելի, ինքնուրույն հետազոտելու համար, երեխաները կարող են յուրացնել դասի ժամին: Ինքնուրույն աշխատանքը օգտագործվում է գիտելիքի կրկնության, համակարգման և ստուգման նպատակով: Ինքնուրույն գործունեություն ձևավորելու համար էական դեր են խաղում տեխնիկական միջոցները և սարքավորումները: Մաթեմատիկայի դասին կարելի է օգտվել ուսումնական ձեռնարկներից, հաշվիչ նյութերից, երկրաչափական պատկերներից, խնդրագրքերից և այլն:

Մաթեմատիկայի դասերին մեծ դեր է խաղում դասագիրքը: Ուսուցիչների երկարամյա փորձը և հատուկ հետազոտությունները ցույց են տվել, որ դասագիրքը ինքնուրույն աշխատանքի կազմակերպման միջոց է: Այն օժտված է ձևավորող մեծ հնարավորություններով: Ուսուցիչը դասագիրքից էլ կարող է հանձնարարություններ տալ ինքնուրույն աշխատանքի համար: Ինքնուրույն աշխատանքի մանկավարժական արժեքը կախված է նրանից, թե ինչպես կկազմակերպվի սովորողի գործունեությունը: Կազմակերպման ձևը ուսումնական գործընթացի մասնակիցների որոշակի դրվածք է, ուսուցչի և սովորողների, հենց աշակերտների միջև փոխհարաբերությունների միջոց:

Ինքնուրույն աշխատանք կատարելու ժամանակ սովորողները ոչ միշտ են ուսուցչից օգնություն ստանում, այդ պատճառով անհրաժեշտ է մանրակրկտորեն մտածել դասի պլանները, որոշել ինքնուրույն աշխատանքի բովանդակությունը և

տեղը, նրա կազմակերպմանը ձևը և մեթոդները: Միայն այդ դեպքում ինքնուրույն աշխատանքը սովորողի կողմից կկատարվի գիտակցորեն: Ընդ որում անհրաժեշտ է մտածել աշխատանքի ծավալի և բարդության մակարդակի, դժվարությունների, հնարավոր սխալների մասին, որոնք կառաջանան երեխայի մոտ աշխատանքը կատարելու ընթացքում:

Ինքնուրույն աշխատանք կատարելիս երեխաների մոտ մեծ տեղ է գրավում վերարտադրողական գործունեությունը: Անհրաժեշտ պայման է համարվում ինքնուրույն աշխատանքի անհատականացումը, այսինքն՝ նրանց ուժերին համապատասխան: Հաշվի առնելով յուրաքանչյուր երեխայի կամ խմբի համար նախատեսված բովանդակության չափը՝ որոշում ենք բարդության չափը, նախատեսված աշխատանքի տեսակը, առաջադրանքների բնույթը, ձևավորված գիտելիքները, որոնք անհրաժեշտ են առաջադրանքները կատարելու համար:

Առաջադրանքի կատարման հաջողությունը կախված է երեխայի կամքից, զարգացվածությունից, գործողությունները ինքնակառավարելու ունակությունից: Այդ պատճառով կարևոր է, որ ուսուցիչը կատարելագործի երեխաների ինքնուրույնության որակը: Դրա համար անհրաժեշտ է ժամանակին գալ օգնության, ոգևորել երեխաներին՝ աշխատանքը կատարելու մինչև վերջ, հանել լարվածությունը և հոգնածությունը, քանի որ այդ տարիքում երեխաների մոտ կամածին ուշադրությունը կայուն չէ: Բոպեական հանգիստը, ուշադրության փոխադրումը առաջացնում են էմոցիոնալ վերելք, ակտիվացնում են մտածողությունը՝ թույլ տալով նորից կենտրոնանալ խնդրի լուծման վրա: Երեխաների ուսուցումը կառավարելիս հաշվի են առնում նաև նրանց ինքնուրույնության ձևավորվածությունը, կոնկրետ առաջադրանքը կատարելու համար անհրաժեշտ գիտելիքների և ունակությունների յուրացման աստիճանը, ինչպես նաև նրա արդիականությունը և կարևորությունը երեխաների համար, հետաքրքիր լինելը հենց ուսուցման ընթացքում: Այս ամենից է կախված ուսուցչի օգնության չափը և բնույթը:

1.2 Ինքնուրույն աշխատանքների տեսակները

Մաթեմատիկայի ժամին ինքնուրույն գործունեությանը բնորոշ է ինքնաստուգումը, դրանից կարևորագույն ձևերից մեկն է ինքնակառավարումը: Աշակերտը չի հասնի աշխատանքի սպասված արդյունքներին, եթե իր գործողությունները չվերահսկի:

Ինքնուրույն աշխատանքի վերահսկման գործունեության հետ խիստ կապված է գնահատելու գործողությունները, որոնք կարևոր դեր են խաղում ինքնակառավարման գործընթացում: Շ. Ա. Ամոնաշվիլու փորձերը ցույց են տվել, որ դրանք անհրաժեշտ է ձևավորել դեռևս կրտսեր դպրոցական տարիքում [*]:

Ինքնուրույն աշխատանքը մաթեմատիկայի դասի ժամանակ օգտագործվում է գիտելիքների կրկնության, համակարգման և ստուգման նպատակով: Սրանով պայմանավորված՝ կարելի է առանձնացնել մաթեմատիկայի դասերի, ինքնուրույն աշխատանքների հետևյալ ձևերը՝

1. Նախապատրաստական աշխատանքներ, որոնք նախապատրաստում են նոր գիտելիքների հետազոտման:
2. Աշխատանքներ, որոնք կազմակերպում են նոր նյութի հետազոտման նպատակով:
3. Աշխատանքներ՝ նպատակաուղղված գիտելիքների կրկնությանը և ամրապնդմանը:
4. Աշխատանքներ՝ կազմակերպված գիտելիքների կիրառման և ունակությունների ձևավորման նպատակով:
5. Ընդհանրացնող ինքնուրույն աշխատանքներ:
6. Ստուգող ինքնուրույն աշխատանքներ:

Ինքնուրույն աշխատանքը ֆրոնտալ (համընդհանուր) ձևով կազմակերպելու առանձնահատկություններն են.

1. Բոլոր սովորողները կատարում են ընդհանուր առաջադրանքներ:

2. Օգտագործվում են սովորողի գործունեության, կազմակերպման և ղեկավարման ընդհանուր եղանակներ:

Համընդհանուր աշխատանքների գլխավոր առավելությունն այն է, որ այստեղ հնարավոր է կոլեկտիվ ձգտում դեպի ընդհանուր նպատակ, խնդիր, ընդհանուր որոշում, սովորողի մոտ ձևավորել համագործակցելու կարողություն: Միջանկյալ և վերջնական արդյունքները կարելի է հաջողությամբ քննարկել բոլոր սովորողների հետ: Դա էականորեն ազդում է գիտելիքների և կարողությունների որակի վրա, խթանում է սովորողի ճանաչողական հետաքրքրությունները և ակտիվությունը:

Ինքնուրույն աշխատանքի համընդհանուր ձևի կազմակերպումը ավելի նպատակահարմար է, երբ սովորողները սկսում են հետազոտել նոր թեմա, երբ աշխատանքը պետք է կազմել այնպես, որ առաջացնի հետաքրքրություն նոր թեմայի նկատմամբ: Ինչպես նաև կարևոր է և օգտակար գիտելիքների ձևավորման սկզբնական փուլում, երբ սովորողը կարողանում է կատարել վարժությունը ըստ օրինակի: Համընդհանուր աշխատանքն ի համեմատ անհատական և խմբային աշխատանքների՝ թույլ է տալիս ուսուցչին հեշտորեն լուծել որոշակի կազմակերպչական հարցեր, քանի որ համընդհանուր աշխատանքը կարելի է անցկացնել դասարանում, առանց քարտերի և բաշխիչ նյութերի. երկու, երեք հանձնարարություն կարող է նշված լինել գրատախտակին, խնդրագրքում կամ դասագրքում: Ինչո՞վ է ուսուցչի համար համընդհանուր աշխատանքների կազմակերպումն անհարմար: Նախ և առաջ նրա բովանդակության միջինությունը: Առաջարկելով առաջադրանքը՝ ուսուցիչը կենտրոնանում է «միջին աշակերտի վրա»: Դժվար է որոշել հստակ ժամանակ, քանի որ յուրաքանչյուրն աշխատում է իր տեմպով: Այս դեպքում բոլոր աշակերտները կարող են արտագրել մյուսներից, ոչ թե ինքնուրույն լուծեն:

Սովորաբար ինքնուրույն աշխատանքը համարվում է անհատական, ճանաչողական գործունեություն աշակերտի համար: Աշխատելով ինքնուրույն՝ աշակերտը առաջնորդվում է իր տեմպով առանց դասարանի հետ կապի: Նա պետք է

ցուցաբերի ինքնուրույն ջանք և պատասխանատվություն՝ հաշվի առնելով սեփական ուժերը: Անհատական աշխատանքը պահանջում է համառություն, տոկունություն, կամք, դժվարությունը հաղթահարելու ժամանակ: Անհատական ինքնուրույն աշխատանք ասելով՝ պետք է հասկանալ այնպիսի աշխատանք, որը նախատեսված է անհատական առաջադրանք կատարելու համար և բացառում է համագործակցությունը սովորողների միջև: Ինքնուրույն աշխատանքում կարող են ընդգրկված լինել ն՝ պարտադիր առաջադրանքներ, ն՝ այլընտրանքային առաջադրանքներ, որոնք աշակերտը կարող է կատարել իրենց ցանկությամբ: Անհատական ինքնուրույն աշխատանքի կազմակերպումը դաս-դասարանային համակարգի պայմաններում, լուրջ դժվարություններ է առաջացնում մանկավարժի մոտ. հեշտ չէ կազմակերպել յուրաքանչյուրի անհատական առանձնահատկություններին համապատասխան աշխատանք: Երկար ժամանակ է անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքների համար: Եթե աշխատանքը դասարանում կատարվում է միաժամանակ, ապա ուսուցիչը ստիպված է պատրաստել մեծ քանակությամբ բաշխիչ քարտեր:

Վերջին տարիներին մեծ տարածում է գտել դպրոցներում **ինքնուրույն աշխատանքի կազմակերպման խմբային ձևը**: Ինչո՞վ է այն գրավում մանկավարժներին: Նախ և առաջ բարեհաջող պայմաններ, որպեսզի սովորողները համագործակցեն, կոլեկտիվորեն փոխազդեն: Խմբային աշխատանքը շփվելու հնարավորություն է, որի պակասը մշտական նկատվում է դպրոցում և ընտանիքում: Խմբային աշխատանքի ամենահեշտ ձևը զույգերով աշխատանքն է: Խմբային աշխատանքի ընթացում յուրաքանչյուր աշակերտ հնարավորություն ունի արտահայտել ինքնուրույնությունը՝ կատարելով կոնկրետ գործողություններ:

Տնային ինքնուրույն աշխատանքը նպաստում է սովորողներին օժտելու ինքնուրույն գիտելիքներին տիրապետելու կարողությամբ, մանկավարժին և ծնողին հնարավորություն է տալիս տեղեկանալու աշակերտի ուսումնական հաջողություններից: Տնային հանձնարարությունները կարող են ունենալ տարբեր

նպատակներ. գիտելիքի և գործնական կարողությունների ամրապնդում, սովորած գիտելիքների և կարողությունների համակարգում և ընդհանրացում սովորողների նախապատրաստում հաջորդ դասերին ուսումնասիրվելիք նյութին: Տնային հանձնարարությունները կարող են լինել անհատական և խմբային, երբ սովորողների խումբը կատարում է ինչ-որ առաջադրանք: Տնային հանձնարարությունների ծավալը պետք է մեծ չլինի:

Ինքնուրույն աշխատանքի արդյունավետությունը մաթեմատիկայի դասերին կախված է ճիշտ նպատակադրումից: Նրանցում արձանագրվում են ուսուցման մերձակա և հեռավոր արդյունքները, որոնց կարելի է հասնել ճանաչողական խնդիրների լուծման ընթացքում: Այդ պատճառով ճիշտ նպատակադրությունը ինքնուրույն գործունեության կառավարման նախնական փուլի գլխավոր գիծն է: Նույնիսկ ամենափոքր և պարզ ինքնուրույն աշխատանքը, որը պլանավորում է դասի ժամին, պետք է ենթարկվի ընդհանուր նպատակներին և ունենա կոնկրետ նպատակ:

1.3. Ինքնուրույն աշխատանքի կազմակերպման մեթոդիկան

Համընդհանուր թեմայի վերլուծության ժամանակ մանկավարժը նախօրոք որոշում է իր համար՝ սովորողը ինչ հարցեր կարող է յուրացնել ինքնուրույն, ինչ առաջադրանքներ կարող են առաջարկվել ընդհանուր ուսումնական ունակություններ ձևավորելու նպատակով: Թեմատիկ պլանում կարող է նախատեսված լինել միայն ինքնուրույն աշխատանքի կազմակերպման հիմնական ձևերն ու տեսակները, որոնք պետք է կատարեն դասաժամին և տանը: Թեմատիկ պլանում կարելի է նշել աշխատանքի հետևողականության տրամաբանությունը, նրա բազմազանությունը և բարդությունը: Ինքնուրույն աշխատանքի պլանավորման երկրորդ փուլը մաթեմատիկայի ժամին կախված է մանկավարժի նախապատրաստությունից կոնկրետ դասաժամին: Կարևոր է մտածել կազմակերպումը, մեթոդիկան, դիդակտիկան կախված մանկավարժական

իրավիճակից և դասարանի կարողություններից: Այդ պատճառով յուրաքանչյուր դասի համար պլանում մանկավարժը կարող է նշել ինքնուրույն աշխատանքի տեղը դասաժամի կառուցվածքում, առաջադրանքը կատարելու համար՝ եղանակները: Առաջանցիկ փորձի վերլուծությունը ցույց է տալիս, որ ժամանակակից դասաժամի կառուցվածքում ինքնուրույն աշխատանքը մաթեմատիկայի դասերին համարվում է նրա առաջնությանը ապահովող տարր: Դասաժամի սկզբին արդարացված է չչարունակվող աշխատանքները, որոնք նախատեսված են 5-10 րոպեի համար, որպեսզի ներառեն ամբողջ դասարանը ակտիվ գործունեության մեջ, կենտրոնացնեն սովորողի ուշադրությունը, հիշողությունը, մտածողությունը, ստեղծեն աշխատանքային տրամադրվածություն: Առաջարկելով այնպիսի առաջադրանքներ, որոնք սովորողները կատարել են տանը, մանկավարժը հնարավորություն ունի ստուգելու, թե երեխաներից ով է կարողանում հանձնարարությունը կատարել ինքնուրույն, ով է դժվարանում, զուգահեռաբար պարզվում է դասարանի նոր նյութի յուրացման պատրաստվածությունը՝ նոր ավելի բարդ հանձնարարություն կատարելու համար: Այդ տեսակի ինքնուրույն աշխատանքներն ունեն ստուգողական և նախապատրաստական բնույթ, ինչպես նաև նպատակառոտված արդիական, օժանդակ գիտելիքների և կարողությունների բացահայտմանը՝ որը կծառայի նոր նյութի յուրացմանը նախապատրաստելուն: Նշանակալիորեն դժվար է ավելացնել ինքնուրույն աշխատանքը նոր գիտելիքների հետազոտության նպատակով մաթեմատիկայի դասաժամի կառուցվածքին: Մանկավարժին՝ մասնավորապես երիտասարդ, դժվար է լինում գնահատել, թե ինչպիսի ուսումնական նյութ կարող է յուրացնել աշակերտն ըստ դասագրքի: Հետազոտությունները ցույց են տվել, որ եթե նյութը բոլորովին նոր է և չունի լայն կապ նախորդ ուսումնասիրված նյութի հետ, առավել նպատակահարմար է, որ բացատրի հենց ինքը՝ մանկավարժը:

Դասի ժամին որոշել ինքնուրույն աշխատանքի տեղը՝ նշանակում է ընտրել այնպիսի ժամանակ, երբ անհրաժեշտ է նրա կատարման համար: Աշխատանքի ծավալի անհամապատասխանությունը տրամադրված ժամանակին նրա

կազմակերպման թերություններից մեկն է: Աշխատանքի ծավալի մեծացումը երեխաների մոտ առաջացնում է անհանգիստ վիճակ, գործողությունների մեջ շտապողականություն, առաջադրանքի կատարման արդյունքի անհամապատասխանություն: Այլ տեսանկյունից նկատվում է առանձին սովորողների հնարավորությունների թերագնահատում, որի արդյունքում մշտապես իրավիճակներ են ստեղծվում, երբ դասարանի մի մասը կատարում է հանձնարարությունը մյուսներից շուտ:

Հաճախ մանկավարժները փորձում են էլք գտնել ստեղծված իրավիճակից, առաջարկում են սովորողներին առավելագույն ծավալի աշխատանքից կատարել այնքանը, որքանը կհասցնեն: Յուրաքանչյուր աշակերտ, իհարկե, կփորձի հաղթահարել աշխատանքի ամբողջ ծավալը: Որոշները կատարում են հեշտությամբ, առանց առաջադրանքի մեջ սխալվելու, մյուսները շտապում են՝ առաջացնելով անփութություն կամ սխալներ են թույլ տալիս, աշխատում են առանց առաջադրանքի շուրջ խորը մտածելու: Այս խնդիրը առավելապես արդյունավետ է որոշվում առաջադրանքի տարբերակումը, որը կորոշի ծանրաբեռնվածությունը, որն էլ բնորոշ է անհատական-առանձնահատկուկ սովորողի հատկությամբ:

Սովորողի նկատմամբ տարբերակող մոտեցումը մաթեմատիկայի դասի ինքնուրույն աշխատանքի ծավալը և բովանդակությունը, պլանավորումը, ծանրաբեռնումը բացառելու հնարավորություններից մեկն է:

Ուսուցման հիմնական նպատակն է սովորեցնել յուրաքանչյուր աշակերտին ինքնուրույն հաղթահարելու գիտելիք, ձևավորել կարողություն: Հայտնի է, որ յուրաքանչյուր աշակերտ յուրացնում է գիտելիք կախված իր մտավոր ունակությունից, հիշողությունից, խառնվածքից, ուսումնական աշխատանքի կարողությունից: Այնպես՝ ինչպես գիտելիքների մակարդակը, ճանաչողական կարողությունը բոլոր երեխաների մոտ միանման չէ, այնպես որ մաթեմատիկայի դասերի ժամանակ կոլեկտիվ ձևով աշխատանք կատարելիս անհրաժեշտ է իրականացնել առաջադրանքի ընտրության տարբերակող մոտեցում: Տարբերակող

առաջադրանքներ կարող են կատարել մաթեմատիկայի դասերին ինքնուրույն աշխատանքների ժամանակ: Վարժությունները պետք է տարբերվեն պարզությամբ, մաթեմատիկական լեզվով՝ հակիրճությամբ: Աշխատանքը պետք է սկսել առավել պարզ վարժություններով, աստիճանաբար այն բարդեցնելով:

Ուսուցման ժամանակ, հաշվի առնելով սովորողի անհատական առանձնահատկությունները, ընդունելով ընդհանուր դիդակտիկական սկզբունքները, սովորողի նախապատրաստական աշխատանքի ժամանակ ծավալվում է ինքնակրթությունը: Ուսումնասիրության անհատական տարբերության ժամանակ արդյունքը ճանապարհներից մեկն է հանդիսանում տարբերակված մոտեցումը: Այն կարևոր է նաև ճանաչողական ինքնուրույնության զարգացման համար և ձևավորում է սովորողի մոտ ինքնակրթության ձգտմանը: Շերտավորված մոտեցումը առաջարկում է սովորողների մտավոր բաժանումը խմբերի և յուրաքանչյուրի առավելագույն ճանաչողական հնարավորությունների բացահայտմանը: Ուսուցման շերտավորված մոտեցումը նշանակում է, որ սովորողներին տալիս է տարբեր դժվարության աստիճանի առաջադրանքներ: Ընդ որում՝ ըստ դժվարության ամենացածր աստիճանը համապատասխանում է ուսուցվող ծրագրի պահանջներին: Այդպիսի առաջադրանքների պարբերաբար կիրառումն ուսուցման ընթացքում զարգացնում է աշակերտի մտավոր կարողությունները:

Շերտավորված մոտեցումը համադրվում է անհատականի հետ: Ուսուցիչը անհրաժեշտության չափով տալիս է առանձին առաջադրանք, որը մտնում է որոշակի խմբերի մեջ, որն էլ ստացել է որոշակի առաջադրանք: Առավել արդյունավետ է զարգանում ճանաչողական ինքնուրույնությունը այն դեպքում, եթե աշակերտը, սկզբում կատարելով հեշտ վարժություններ, ապա ավելի բարդը, ինքն է ձգտում իր համար ուժեղ հարցերին պատասխանել, հասկանում է և կատարում է ինքնուրույն: Թե աշակերտը ինչպես է գնահատում իր ճանաչողական հնարավորությունները, շատ դեպքերում կախված է իր աշխատանքից:

Շերտավորված առաջադրանքները պետք է նախապատրաստված լինեն նախօրոք, գրված լինեն գրատախտակին, աղյուսակներում, քարտերի վրա: Դրանք լինում են երկու տեսակի.

1. Պարտադիր առաջադրանքներ:

Դրանք նպաստում են ուսումնասիրված կանոնի ճիշտ կիրառմանը հաշվողական կարողության ձևավորման ժամանակ, դրանք պետք է լինեն սահմանափակ քանակությամբ և պետք է լինեն յուրաքանչյուր աշակերտի ուժերի ներածի չափով:

2. Լրացուցիչ առաջադրանքներ:

Դրանք նախատեսված են այն երեխաների համար, ովքեր ավարտել են պարտադիր առաջադրանքը և ժամանակ ունեն լրացուցիչ առաջադրանքի համար: Դրանք կարող են լինել սովորած կանոնին համապատասխան բարդացված առաջադրանքներ, որոնք պահանջում են համեմատություն, վերլուծություն, որոշակի եզրահանգումներ:

Սովորողների ինքնուրույն աշխատանքի կազմակերպմանը օգնում է դիդակտիկական նյութը՝ քարտի տեսքով: Քարտերով աշխատանքը ապահովվում է սովորողի անհատական աշխատանքը կախված նրա պատրաստվածության մակարդակից:

Հիմնականում բարդ է կազմակերպել սովորողի ինքնուրույն աշխատանքը խնդիրների լուծման ուսուցման ժամանակ և նրան օգնել, եթե կա դրա անհրաժեշտությունը: Խնդրի լուծման ժամանակ ինքնուրույն աշխատանք հնարավոր է այն դեպքում, եթե երեխաների մոտ ձևավորված է խնդիր լուծելու ընդհանուր կարողություն: Նախ և առաջ խնդիր կազմելիս հաշվի առնել սովորողների անհատական առանձնահատկությունները և նրանց ունեցած գիտելիքների մակարդակը: Այսպես օրինակ. ուժեղ սովորողների համար կարելի է առաջարկել առաջադրանք՝ լուծել խնդիր, կազմել և լուծել համապատասխան խնդիրը, մյուս սովորողների համար դա ուժերից վեր է, և նրանց անհրաժեշտ է օգնություն: Այս

նպատակով ցանկալի է առաջարկել քարտեր կարճ գրառումներով կամ խնդրի պարզաբանումը, իսկ մյուսներին՝ քարտ խնդրի լուծման համառոտագրությամբ կամ պատրաստի լուծումով, բայց հանձնարարությամբ՝ բացատրել խնդրի յուրաքանչյուր գործողությունը: Քարտերը կազմելու ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել յուրաքանչյուր աշակերտի պատրաստվածությունը և անհատական առանձնահատկությունը: Որոշ դեպքերում անհրաժեշտ է մեծացնել աշխատանքի ծավալը, մյուսներում առաջարկել հանձնարարություն ստեղծագործական բնույթի:

Մաթեմատիկայի դասերին կարելի է օգտագործել քարտեր ինքնուրույն աշխատանքի համար և՛ բարձր, և՛ ցածր առաջադիմություն ունեցող աշակերտների համար:

Աշխատանքը գույգերով դրական է ազդում մտավոր ունակությունների ակտիվացման համար, որպեսզի կատարելագործեն, հետևողականորեն իրագործեն իրենց մտքերը: Երեխաները զգում են իրենց ազատ, քանի որ իրենց որոշումները չի վերահսկվում ուսուցչի կողմից: Շփման ընթացում սովորողները քննարկում են ստացված արդյունքները, բերում են վերջնական տեսքի, օգնում են միմյանց սխալները փնտրելու ժամանակ:

Ինքնուրույն աշխատանք կազմակերպելիս անհրաժեշտ է մտածել, թե ինչպես ուսուցիչը պետք է կատարի վերահսկողությունը սովորողի աշխատանքի նկատմամբ և ցույց տա անհրաժեշտ օգնություն: Այս նպատակով օգտակար է պատրաստել քարտեր՝ առաջադրանքի լուծման օրինակով, որը պետք է առաջարկվի աշակերտին: Առաջադրանքը կատարելուց հետո աշակերտը կարող է ինքնուրույն ստուգել ըստ օրինակի: Եթե պատասխանը չի համընկնում օրինակի պատասխանին, ապա աշակերտն ինքնուրույն չի կարող գտնել սխալը և ճիշտ պատասխանը, այդ դեպքում օգնում է ուսուցիչը:

ՀՈՒՇԱԹԵՐԹ

- 1) Փորձի՛ր ինքնուրույն լուծել հանձնարարությունը:
- 2) Երբ գլխի կընկնես, թե ինչպես պետք է լուծես, անմիջապես լուծի՛ր:

3) Հայտնի՝ ը ուսուցչին, որ այն կարող ես ինքնուրույն լուծել:

4) Լուծելով հիմնական առաջադրանքը՝ մի՛ սպասիր ուսուցչի որոշմանը, սկսի՛ր կատարել լրացուցիչ առաջադրանքը:

Կարելի է օգտագործել դրոշակներ: Այն երեխաները, որոնք գիտեն՝ ինչպես կատարել առաջադրանքը, բարձրացնում են դրոշակներ, և ուսուցիչը տեսնում է, թե ով է դժվարանում կատարել առաջադրանքը: Առաջադրանքի մակարդակը, որը առաջարկվում է քարտերով, շատ դեպքերում կախված է ուսուցչի կոմպետենտությունից, նրա գիտելիքներից, յուրաքանչյուր աշակերտի անհատական առանձնահատկություններից:

Ինքնուրույն աշխատանքը նախատեսված է պարզելու ծրագրային նյութի յուրացման մակարդակը, թույլ է տալիս վեր հանել գիտելիքներում առկա թերությունները, դրանց ի հայտ գալու պատճառները:

Մեր հետազոտության մեջ առանցքային ուսումնասիրության հարց ենք համարել տեքստային խնդիրների լուծման ուսուցման ժամանակ կիրառվող ինքնուրույն աշխատանքների կազմակերպումը և առաջարկում ենք նրանում կիրառել հետևյալ տեսակի առաջադրանքներ:

1. Կազմել խնդիր հետևյալ թվերով:
2. Կազմել որքան հնարավոր է շատ խնդիրներ հետևյալ թվերով:
3. Կազմել մի քանի տարբեր խնդիրներ, որոնք ունեն տվյալ լուծումը:
4. Կազմել համանման խնդիրը, որը չունի տվյալ լուծումը:
5. Կազմել հնարավորինս շատ հարցեր տվյալ պայմանների համար:
6. Կազմել հնարավորինս շատ պայմաններ տվյալ հարցերի համար:

Այսպիսով՝ ինքնուրույն աշխատանք կատարելու կարողությունների ձևավորման ժամանակ ուսուցիչը օգտագործում է ինքնուրույն աշխատանքի կազմակերպման ձևեր՝ ընդհանուր, անհատական, խմբային և այլ տեսակներ: Բայց միայն ճիշտ կազմակերպան ժամանակ է հնարավոր ակտիվացնել երեխաների մտավոր կարողությունները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով՝ քննարկվող թեմայի վերաբերյալ մեր կողմից կատարված գրականության վերլուծությունը, հետազոտություններն հանգեցրին այն եզրակացության, որ.

1. Աշակերտի ինքնուրույն աշխատանքը դպրոցում և տանը ուսուցման, դաստիարակության կանոնադրային խնդիրներից մեկն է հանդիսանում:
2. Ինքնուրույն աշխատանքի արդյունավետությունը պայմանավորված է դրա ճիշտ կազմակերպումով: Այդ դեպքում մեծ է ուսուցչի կատարած մեթոդական աշխատանքի դերը դպրոցում, տվյալ դեպքում մաթեմատիկայի դասերին:
3. Ինքնուրույն աշխատանքի կազմակերպման նպատակը երեխաների մոտ ինքնուրույն մտածողության զարգացումն է, սեփական գործունեության նպատակի գիտակցումը, ուսումնական առաջադրանքի ընդունումը և այլ հետաքրքրությունների միջոցով դրա կատարմանը ենթարկվելը, ինքնակազմակերպումը, ինքնակառավարումը դրանք կատարելիս:
4. Ինքնուրույն աշխատանքի ճիշտ կազմակերպումը նպաստում է երեխաների մոտ ինքնուրույնության, նախաձեռնողականության, աշխատանքային ջանքերի նկատմամբ սիրո և հարմարվողականության, պատասխանատվության զգացումի, հաստատակամության և այլ անձնային որակների դաստիարակմանը:

Այս աշխատանքների կազմակերպման արդյունավետությունը մեծապես կախված է ուսուցչի մեթոդական պատրաստվածությունից: Ուսուցիչը պետք է կարողանա.

I. Աշակերտներին զինել այնպիսի գիտելիքներով, կարողություններով ու ունակություններով, որ նպաստեն աշակերտի ինքնուրույն մտածողության զարգացմանը:

II. Գիտակցի իր առջև դրված նպատակներն ու ուսումնական խնդիրները:

III. Ուսուցումը դարձնի հնարավորին չափ բազմաբովանդակ ու հետաքրքրական:

IV. Ճիշտ կազմակերպի դասարանական, տնային և ստուգողական ինքնուրույն աշխատանքները:

V. Կազմի համապատասխան աղյուսակներ՝ ուսուցումն անհատականացնելու նպատակով, այսինքն՝ ցուցաբերի անհատական մոտեցում:

VI. Օգտագործի գնականությունը տեղին և ճիշտ ժամանակին:

VII. Ինքնուրույն կատարված աշխատանքները անպայման ժամանակին ստուգի, գնահատի, դասարանում վերլուծի, ամփոփի և ընդհանրացնի, գտնի աշակերտների գիտելիքների, կարողությունների թերի կողմերը մաթեմատիկայից:

Կրտսեր դպրոցականի ինքնուրույնության զարգացման հարցը, մեր կարծիքով, ներկայումս էլ խիստ կարևոր ու արդիական խնդիր է, ուստի անհրաժեշտ է շարունակել հետազոտություններն այդ ուղղությամբ և զարգացնել երեխայի ինքնուրույնությունը ոչ միայն մաթեմատիկայի դասերին, այլև տարրական դասարանների մյուս առարկաների ուսումնասիրման ժամանակ:

Պետք է հանգեցնել նրան, որ երեխաներն ինքնուրույն կերպով կարողանան լուծել իրենց առջև դրված ցանկացած խնդիր:

О Ч С Ц Ф П Р Ъ Ч Ц Ъ Ф Р Ц Ч Ц Ъ П Т Ё Э Ц Ъ С Ц Ъ Ч

1. Белошистая А.В., Методика обучения математике в начальной школе- Москва, ВЛАДОС. 2005г.
2. Подласый И. П., Педагогика начальной школы, Москва 2004г.
3. Истомина Н. В., Методика обучения математики в начальных классах- Ярославль, ЛИНКА – ПРЕСС, 1977г.
4. Вагин В.В., Виды самостоятельных работ на уроке математики – Журнал «Моя Шк.» N 10, 1972г.
5. Вапняр Н.Ф., Самостоятельная работа учащихся при ознакомлении с новым материалом на уроках математики – Журнал «Начальная Школа» N7, 1972г.
6. Гаруков М. Г., Самостоятельная работа учащихся как средство накопления опыта творческой деятельности, – Журнал «Начальная Школа» N4, 1973г.
7. Семья Ф.Ф. «Развитие самостоятельности на уроках математики»– Журнал «Начальная Школа» N3, 1974г.
8. Шамстудинова Г. С., Самостоятельная работа с наглядным материалом - Журнал «Начальная Школа» N4, 1977г.
9. Вагин В.В. Домашние задания по математике– Журнал «Начальная Школа» N9, 1977г.
10. Вагняр Н. Ф. Помощь ученикам при выполнении самостоятельных работ по математике – Журнал «Начальная Школа» N6, 1980г.
11. Уткина Т.В. Домашняя работа учащихся по математике – Журнал «Начальная Школа» N5, 1983г.
12. Уткина Т.В. Проверка домашних заданий по математике – Журнал «Начальная Школа» N6, 1983г.
13. Роганова Н. Ф. Организация самостоятельной работы учащихся на уроке– Журнал «Начальная Школа» N2, 1989г.
14. Юдачева Т.В. Деятельность учителя по организации домашней работы по математике – Журнал «Начальная Школа» N3, 1990г.
15. Девашина Е. Ю. Самостоятельная работа на уроках математики в условиях развивающего обучения– Журнал «Начальная Школа» N7, 2003г.

16. Бормотова М. М., Развитие самоконтроля у младших школьников на уроках математики– Журнал, «Начальная Школа» №9, 2005г.